

Ե. Օտեանի ժամանակի դէպֆերը այսօր այլեւս պատմութիւն են. քէեւ Ընկ. Փանջունիի վերջին մասերը այդ պատմութեան խեղաքիւրումն են, մի տեսակ ծուռ հայելին, բայց մենք ի վիճակի ենք նիշտը սխալից գտտելու, որումը ցարենից ջոկելու: Այն ինչ որ նշարիս է ու մընայում՝ կապրի յաւիսեան Ե. Օտեանի գործում. սուտն ու սխալը կը մեռնեն ժամանակի ընթացքում:

Պատմում են, որ «Առաքելութիւն մը ի Շապլվար»-ի լոյս տեսնելուց յետոյ, Սիմոն Զաւարեանը հանդիպելով Ե. Օտ-

եանին՝ բարեկամօրէն ծեծել է ուսը եւ ասել.

— Պ. Օտեան, երէ ես դրամ ունենայի, Փանջունիիդ իինք հազար օրինակ կը տպէի եւ կը տարածէի մեր բոլոր ընկերների մէջ . . . :

Մեծագոյն գովիստը, որ Ե. Օտեանը կարող էր լսել իր գործի համար:

Ս. Զաւարեանի բաղձանքը, համեստ սահմաններում, իրագործել են ահա նահ. Դրագ. Բարեկամները: Հասարակութեան կը մնայ կարդալ ու տարածել:

Ս. Վ.

ՅՈՒՍԻԿ ԱՐՔԵՊ. ԶՈՀՐԱՊԵԱՆ՝

«Հայոց Եկեղեցու պատմութիւնը» (ոռումաներէն):

Ռումանիայի հայ ազգաքննակութեան այն մասը, որ դեռ պահել է ազգային կրօնը, բաժանուում է երկու հաստածի. Իին բնակիչները, որոնք կորցրել են մայրենի լեզուն եւ մինչեւ վերջերս խօսում էին քիրքերէն, իսկ այժմ սկսում են խօսել ռաւմաներէն, եւ նորերը, որոնք գլխաւորապէս գաղքած են Թիրքիայից՝ հալածանեների եւ կոտորածների հետեւանելով: Այս վերջինները պահել են հայերէն լեզուն և իրենց գաւակներին, գէր նախնական շրջանում, տալիս են ազգային կրթութիւն:

Յուսիկ Արքեպ.-ի ներկայ գիրքը պատրաստուած է գլխաւորապէս ստաշին կարգի հայերի համար, որպէսզի նրանք հասկանալի լեզուվ ծանօթանան իրենց ժողովրդի եւ ազգային Եկեղեցու անցեալին: Բնականարար, հեղինակի նը-պատակն է գարքեցնել այդ մարդկանց մարած կամ մարող ազգային գիտակցութիւնը եւ աւելի ամուր կապերով կապել ազգային հաւաքականութեան հետ:

Յուսիկ Արքազանի անունը, նրա զարգացումը և հայ ժողովրդի ու Եկեղեցու պատմութեան խորանեկ ծանօթութիւնը պէտք չունեն մեկնաւթեան: Նա տւել է գեղեցիկ կազմած, հանրամատչելի ու յստակ մի գործ, որի բերելիք օգուտը վեր է ամէն կասկածից: Հեղինակը մեծ հմտութեամբ իրար հետ է կապել ազգային եւ Եկեղեցական պատմութիւնը եւ առանց գիրքը երկրորդական մանրամասնութիւններով լինողելու, տւել է պարզ ու յստակ պատկերը հայ ժողովրդի անցեալ նակատագրի:

Յուսիկ Արքեպ.-ի ընտրած ուղին գիտութիւն եւ պատմական նշամբառութիւն - լաւագոյն ուղին է հասմելու համար ուծացած եւ ուծացող հայ բեկորների սրտին: Յուսանք որ այս մէկ գործով չի սահմանափակի նրա աշխատանքը. նա, նոր աշխատութիւններ էլ կը տայ ոռումանացած հայերի մէջ ազգային զգացումը արքնացնելու համար:

Տ. Զ.

